


Ները դիտելու հետ է, կըսէ թէ հիմա նոյեմբերի 15ին առաջուան չափ ասուա չերեւնար : Այս կարծիքն է նաեւ Պ. Պապինէ Փարիզու անուանի աստեղաբաշխը :



ԵՐԿԱՑՆԱԿԵԱՅ ՄՈՐԴՈՒ ՆԿԱՐԱԳԻՐ.


Հոչակաւոր Հումբանտ գերմանացի թժիշկը, որ 1856ին մեռած է, այսպէս կըստորագրէ երկայնակեաց մարդը :

Հասակը միջակ եւ բարեձեւ . դեմքը ոչ այնչափ գունաւոր, վասն զի դեմքին շատ գունաւոր ըլլալը, մանաւանդ պատիկութեան ատեն, նշան է սակաւակեցութեան . մազերը աւելի խարտեաշ քան թէ սեւ . մարմնոյն մորը պինդ՝ առանց կարծր ըլլալու . զուխը միջակ մեծութիւն ունի . անդամներուն վրայ երակները որոշ կերեւան . ուսերն աւելի կլորած են քան թէ տափկած . վիզը շատ երկայն եւ փորը շատ դուրս ընկած չեն . ձեռուըները խոշոր են՝ բայց խորունկ ակօսներ չունին . ոսուըներն աւելի լայն են քան թէ երկայն, եւ սրունքը գրեթէ կլոր . կուրծքը լայն ու կամարածեւ . ձայնը զօրաւոր եւ քաշաննչող . երկար ատեն շունը կրնայ բռնել առանց նեղութեան : Ընդհանրապէս բոլոր անդամոցը մէջ կատարեալ ներդաշնակութիւն մը կըտիրէ . զգայարանքը առանց շատ փափուկ ըլլալու դիւրագած են . երակին զարնուածքը ծանր եւ միակերպ :

Ստամոքսը զօրաւոր է, ախորժակը բաց եւ մարտզութիւնը դիւրին : Սեղան նատած ատենը վրան ուրախութիւն մը կուգայ . ամէն կերածեն համ կառնու . անոր համար ալ կերակութիւն ժամին մօտենալը սիրով կըյիշէ : Ծանր ծանր կուտէ, շուր քիչ կըխմէ, վասն զի շատ շուր խմելը աղեաց բորբոքմանը նշան է :

Ընդհանրապէս քաղցրաբարոյ է, կերպը սիրելի, բնութիւնը հաղորդական, ուրախ, զուարք, դիւրաւ կըսիրէ ու կըյուսայ . ոխակալութիւն, ատելութիւն և բարկութիւն նեռու են իրմէ : Կիրքերը միշտ մեղմ են . թէ որ յանկարծ բարկանայ նէ ալ, ամեննեին չինասութիւն, որովհետեւ օգտակար տաքութիւն մը, շինծու չերմ մըն է այն եւ ոչ թէ դառնութիւն եւ յուզումն մաղձի : Միշտ զուարձակի բաներու վրայ կուզէ մտածել, բնութիւնն ու ընտանեկան կանքը շատ կըսիրէ : Փառախութիւն և ազանութիւն ինչ ըսել է չգիտեր . եւ երկրորդ օրուան պատահելիք բաներուն վրայ

շատ չմտածեր, որպէս զի նոյն օրուան ուրախութիւնը չայլայլի :



ՇԱՆ ՕԳՏԱԿԱՐՈՒԹԻՒՆԸ ՈՒ ՀԱԿԱՏԱՐՄՈՒԹԵԱՆԸ

Շան օգտակարութեանն ու հաւատարմութեանը վրայ Փարիզու Սիէքր օրագրոյն մէջ հետեւեալ պատմութիւնը կըկարդանք :

«Պ. Կարոլոս I..., մէկէն 520 ֆրանք առնելիք ուներ, եւ քանի քանի անզամ գնացեր ստակն ուզեր ու միշտ սնուտի խոստմունքներով ձեռնունայն ետ դարձեր եր : Օր մըն ալ վերջի աստիճանի կարօտութենէ ստիպեալ նորէն կերպայ որ ստակն ուզէ . եւ ինչ մեծ ու անակնկալ կըլլայ ուրախութիւնը երբոր պարտապանը կընանէ մէկէն ձեռքը 500 ֆրանքնոց բուդր մը և 20 ֆրանքնոց ոսկի ձեռքը կըդնէ : Թուզքը դրամանոցին մէջ կըդնէ, թիկնոցին գրպանը կըխորէ, ոսկին կրիփտէ՝ մանր ստակ կընէ եւ ճամբան որչափ աղքատ որ հանդիպի՝ ամենուն քան մը կուտայ : Ուշ ատեն այսպէս ուրախութեամբ շուտ շուտ քայելու ժամանակ որպէս զի բուրովին մուրը չկրիսած տուն հասնի, վասն զի տունը Փարիզէն դուրս է եղեր, տէրը կորսրնցուցած տղմարաբաւ սովալլուկ շուն մը քովը կուզայ ու չորս դին ցատքըտեղով խեղճ կըրափէ : Կըխդայ վրան Պ. Կարոլոս, կըբռնէ կըշոյէ զայն ու հետը կառնու որ տուն տանի :

Ճամբան միտքը կուզայ որ կինը կենդանի չսիրեր, ուստի եւ իր հիւրը շատ սիրով պիտի չընդունի . բայց որովհետեւ մուրը կոխեր եր, միտքը կըդնէ թէ կրնայ առանց կնկանը ցուցընելու շունը ներս տանիլ, եւ կամաց կամաց անոր միտքը համոզել որ անտէր խեղճ շունը դուրս չընէ : Բայց տուն կըմտնէ չմտներ, կինը շունը կըտնսնէ ու կըսկսի երկանը երեսն ի վեր պոռալ կանչել որ զիտէ թէ շուն չսիրեր, ինչո՞ւ առեր հետը բերեր է : Խեղճ մարդը կըջանայ ինքզինքը արդարացընել, եւ անոր բարկութիւնը իշեցընելու համար « Զես զիտեր, հինգ հարիւր ֆրանք բերի քեզի կըսէ » եւ ձեռքը ծոցը կըխորէ որ դրամարուզքը դուրս հանէ ցուցընէ . զիտուն ձիւն կուզայ երբոր կընայի որ գրապանակը (ճրզտան) ծոցը չկայ, ճամբան ընկեր է :

Այն կորստեան վրայ աւելի կըկատդի կինը, դառն խօսքերով երկանը անհոգութիւնը երեսը կըզարնէ, եւ տեսնելով որ շունը անկիւն մը քաշուած անձայն կեցեր կընայէր, վրան կըյարձակի

որ բարկութիւնը իրմէ հանէ. բայց ինչ մեծ կըդլայ զարմանքն ու խնդութիւնը երբ անոր բերնին մէջ կըգտնէ երկանը գրապանակը : Սաստիկ ուրախութենէն կըբռնէ կըպազնէ հաւատարիմ ու օգտակար շնիկը, եւ այնունետեւ սիրով կըդոգայ ու կըդարմանէ զայն :

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՔ.

— Գայլախազ քարերնիս իրարու նետ շփենք որպէս զի կայծ հանեն, բայց Աստուծոյ սիրոյն համար ըլլայ՝ իրարու գլուխ չնետենք :

— Կեանքն ալ ծովու ջրոյն պէս դեպ ի երկինք ելլելով միայն կանուշնայ :

— Ամեն մեկ աստղ իր լուսոյն նետ սրտիս մէջ յուսոյ շառաւիդ մը կիշեցընէ :

— Թէ որ շատախօսք մեզի ծածուկ բան մը կրպատմեն այն պայմանաւ որ ուրիշին ջրսենք, պատճառն այն է որ իրենք միայն կուզեն ամենուն իմացընել :

— Բարեկամութիւնն որ աշխարհիս վրայ գտնուած ամեն բանէ սակաւագիւտ ու քաղցր է, որ աստուածոց կըգոնէն մարդիկ : — Անձնասիրութեան, շահասիրութեան :

— Առջի բարեգործութիւններդ կըջնջես թէ որ նոգչտանիսաւնոնքերկրորդ եւ երրորդ բարեգործութեամբք չնորոգել : Հարիւր անգամ բարիք ըրէ տուր, մեկ անգամ մի տար ու մերժէ, այն մերժումը միտք կըմնայ, մեկանոնք բոլոր կըմոցուին :

— Ամօրխածութիւնն ու ցողը շուրք կըսիրեն. երկուքն ալ երկրիս լոյսը տեսնելուն պէս երկինք կըվերանան :

— Ռէջափ որ իմաստնոյն գիտութիւնը շատնայ, այնչափ ալ իր վրայ ունեցած վստահութիւնը կըպակի նման արեգական որ նրջափ բարձրանայ՝ այնչափ ալ շուրքը կըքիչնայ :

— Բարբարոսի մը անցած ժամանակ աւազի վրայ ձգած ոսքին նշանը տեսնելով կըհաւատայ անաստուածը թէ աշխարհիս վրայ կայ անիկայ, եւ չուզեր հաւատայ թէ Աստուած կայ որուն ձեռքը բոլոր տիեզերաց վրայ դրոշմուած է :

— Կուզեկի ժայոփի նման ըլլայ որուն արմատները ծովուն մէջ կըտարածուին, գագարը երկինքը կընայի ու ոչ երբէք կըտատանի :

— Կուզեկի այն բոցնեկին նմանիլ, որ միւղին վրայ կեցած՝ անոյշ հովեն կորորայ, արեւուն կենաստու ճառագայքները վրան կըզարնեն, եւ երգերուն ձայնը անդադար կապտագոյն երկինքը կըրոջին կեցին :

— Վեհ ոգիք միայն կընաւկընան թէ նրջափ փառք ու պատիւ և մարդուս բարի ու բարերար ըլլալ :

— Ստով մը յանցանք գոցելը անոր կընմանի որ մեկը բիծն հանեմ ըսելով տեղը խոշոր ծակ մը բանայ :

— Լուակեաց անմիտ մարդիկ բանալեօք կղպած պարապ դարաններու կընմանին :

ՕՐԵՆՔ ԸՆԴԴԵՄ ԱՐԲԵՑՈՒԹԵԱԾ.

Շուետի երկրին մէջ երբոր մեկը գինովնայ ու դուրսը հասարակաց տեղ մը գտնուի, առաջին անգամուն 15 ֆրանք տուգանք կուտայ. երկրորդ անգամուն 30 ֆրանք. իսկ երրորդ ու չորրորդ անգամուն պատիժներն աւելի խիստ են. ոչ միայն աւելի տտակ կուտայ, այլ նաև հասարակաց ընտրութիւններուն մէջ քուէ ձգելու եւ ընտրուելու կարողութիւնը կըկորսընցընէ, ու գինովնութեանը յաջորդ կիրակին իր բաղի եկեղեցւոյն դրան առջեւը ցցի մք կապուած կըկենայ : Հինգերորդ անգամուն զգաստութեան տուն մը կըդրուի ու վեց ամիս չարաշար կաշխատի : Վեցերորդ անգամուն բանտ կերրայ :

Գինովութեան յորդորողն ալ 15 ֆրանք տուգանք ունի. եւ թէ որ գինովցուցածը չափանասչէ՝ տուգանքը կըկին կըլլայ :

Գինով եկեղեցականէն պատարագելու իշխանութիւնը կառնեն. տէրութեան պաշտօնի մէջ գտնուող աշխարհականն ալ պաշտօնէն կըձգուի :

Ոչ երբէք մեկը գինովութեանը պատճառաւ կընայ ըրած յանցանքին արդարանալ :

Գինովութեամբ մեռած մարդը հասարակաց գերեզմատունը չքաղուիր :

ԱՇԽԱՏԱ ԵՐԿՐԻ.

Երկիրս կըկշուկ:

6,700000,000000,000000,000000 հազարկրամ կամ

4,460250,000000,000000,000000 քաշ (օգգա) :